ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆԸ

«19» ապրիլի 2017 թվականի № 53-Ա

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ընդերքի պետական տեսչության և էներգետիկայի պետական տեսչության (այսուհետ՝ Տեսչություններ) կողմից Հայաստանի Հանրապետության դատական ատյաններ ներկայացվող հայցերի, ինչպես նաև Տեսչությունների ստուգման ակտերի դեմ բերված հայցերով, բողոքներով Հայաստանի Հանրապետության դատական ատյանների վարույթում գտնվող բոլոր գործերով կայացրած վճիռների, որոշումների արդյունքները գնահատելու, վերլուծելու և դրանց հաշվառումը ապահովելու նպատակով.

ՀՐԱՄԱՅՈՒՄԵՄ՝

1. Տեսչությունների պետերին.

1) յուրաքանչյուր կիսամյակին հաջորդող ամսվա մինչև 10-ը ստուգման ակտերի նկատմամբ Հայաստանի Հանրապետության դատական ատյաններում քննվող գործերի ընթացքի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի իրավաբանական վարչություն (այսուհետ՝ Վարչություն) ներկայացնել տեղեկատվություն՝ սույն հրամանի հավելվածի ձևաչափով,

2) տեղեկությունը ներկայացնել էլեկտրոնային եղանակով (To: hburmanyan@minenergy.am; rpiloyan@minenergy.am էլեկտրոնային հասցեներով),

3) միաժամանակ, ուղարկել նաև հայցերի և դրանց պատասխանների պատկերամուտ պատճենները:

2. Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի իրավաբանական վարչության պետին՝ ներկայացված տեղեկությունների հիման վրա ամփոփ տեղեկատվությունը ներկայացնել ինձ յուրաքանչյուր կիսամյակին հաջորդող ամսվա մինչև 25-ը:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ղեկավարին:

/ԱՇՈՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Հավելված

2017 թվականի 1-ին կիսամյակում առկա
ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ընդերքի պետական տեսչության դատական գործերի մասին տեղեկություն

ՀՀ	Կողմեր (հայցվոր, պատասխանող, երրորդ անձինք)	Հայցի համարը և ա.ա.տ.	Վարույթ իրականացնող դատարանի անվանումը	Հայցի առարկան	Վճռի համառոտ բովանդակությունը	Բողոքի ներկայացման ա.ա.տ.	Որոշման բովանդակությունը ա.ա.տ.
1	*1*	*2*	*3*	*4*	*5*	*6*	*7*